ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ

ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 76-Ա «01» Հունվարի 2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N 05-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների 1-ին մասերը՝

Հրամայում եմ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի փետրվարի 18-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգը հաստատելու մասին» 05-Լ հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

11/1/2022

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM, 1909620211

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2022 թ. փետրվարի 18 -ի N 5 -Լ հրամանի

«Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2022 թ. փետրվարի նոյեմբերի 1-ի N 76 -Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են հանրակրթական հիմնական ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություն) ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման հետ կապված իրավահարաբերությունները:

2. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

2. Ուսումնական խմբակների (այսուհետ՝ Խմբակ) անհրաժեշտությունը որոշվում է սովորողների առաջարկությամբ, հանրակրթության պետական չափորոշչով սահմանված առաջնահերթություններով, դպրոցի զարգացման նպատակներով:
3. Խմբակը կարող է վարել ուսուցիչը կամ համապատասխան որակավորում ունեցող մասնագետը:
4. Խմբակը ստեղծվում է սովորողների՝

1) արտադասարանական ուսումնառության և ժամանցի կազմակերպման համար,
2) նախասիրությունների, հետաքրքրության տարբեր ոլորտների (գիտություն, արվեստ, զբոսաշրջություն, հայրենագիտություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ և այլն) վերաբերյալ ուսումնական ծրագրերի իրականացման համար,
3) սոցիալականացման և ինքնուրույն կենսագործունեության համար,
4) մասնագիտական կողմնորոշման համար:

5. Հաստատությունում Խմբակները ձևավորվում են՝

1) կրթության պետական կառավարման լիազորված մարմնի որոշմամբ,
2) մանկավարժական խորհրդի որոշմամբ կամ ծնողների առաջարկությամբ՝ Հաստատության տնօրենի հրամանով՝ պահպանելով սույն կարգի 8-րդ և 10-րդ կետերով սահմանված պահանջները:

6. Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի որոշմամբ սահմանվում են առողջ ապրելակերպի խմբակն ու մասնագիտական կողմնորոշման ակումբը:
7. Խմբակի աշխատանքի կազմակերպման և վարման վերահսկողությունն իրականացնում է Հաստատության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգողը կամ տնօրենի տեղակալը, բացակայության դեպքում՝ տնօրենը:
8. Խմբակի ծրագիրն (այսուհետ՝ Ծրագիր) անհրաժեշտ է մինչև հունիսի 15-ը, համաձայն ՁԵ-1-ի, ներկայացնել «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ՝ նոր ուսումնական տարում գործածելու նպատակով: Վերջինս

փորձագիտական դրական եզրակացության դեպքում խմբակի ծրագիրը ներկայացնում է Նախարարություն՝ սահմանված կարգով գործածության երաշխավորելու համար:

9. Ծրագիրը ներառում է.

1) ծրագրի նպատակը, խնդիրները,
2) ակնկալվող վերջնարդյունքները,
3) հատկացվող ընդհանուր ժամաքանակը,
4) սովորողների տարիքային խումբը կամ դասարանը(ները),
5) բովանդակությունը,
6) պահանջվող նյութատեխնիկական բազան,
7) օգտագործված գրականության ցանկը, հղումները:

10. Նախարարության կողմից հաստատված ծրագրերը հանրակրթական ուսումնական հաստատությունները կարող են օգտագործել առանց լրացուցիչ հաստատման:
11. Կրթական որևէ աստիճանում խմբակի իրականացման համար հատկացվող ժամաքանակը չի կարող գերազանցել շաբաթական 2 ժամը:
12. Կրթական տարբեր աստիճաններում միաժամանակ կարող է իրականացվել նույն խմբակը:
13. Յուրաքանչյուր կրթական աստիճանում գործող ծրագիրը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին: Ծրագրի անվանումը չի կարող կրկնել ուսումնական պլանով նախատեսված որևէ ուսումնական առարկայի անվանումը և ծրագրի բովանդակությունը:

3. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

14. Խմբակը տարիֆիկացվում է, եթե Խմբակի ծրագիրը հաստատվել է Հաստատության տնօրենի կողմից և առնվազն 8 սովորող խմբակում ընդգրկվելու ցանկություն է հայտնել:
15. Խմբակի ստեղծումը, Խմբակի ղեկավարի նշանակումը և սովորողների կազմը հաստատվում են Հաստատության տնօրենի հարամանով:

16. Խմբակի ղեկավարը պատասխանատու է Խմբակի ծրագրի իրականացման համար:
17. Խմբակի ղեկավարը Խմբակի ծրագրի հիման վրա մշակում է Խմբակի թեմատիկ պլանը, որը հաստատում է Հաստատության տնօրենը:
18. Խմբակի ղեկավարը կազմում է Խմբակի մատյան, որը հաստատվում է Հաստատության տնօրենի հրամանով: Մատյանը կազմված է սովորողների հաճախումների և օրվա ուսումնական նյութի գրանցման էջերից: Մատյանում օրվա ուսումնական նյութը գրանցվում է ըստ խմբակի թեմատիկ պլանի:
19. Սովորողները կարող են մասնակցել Խմբակի աշխատանքներին՝ իրենց ցանկությամբ:
20. Սովորողները առանց հիմնավորման կարող են հրաժարվել Խմբակի աշխատանքներին մասնակցելուց: Բացառություն կարող են կազմել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի որոշմամբ սահմանված խմբակները:
21. Հաստատության ընտրությամբ Խմբակում ընդգրկված սովորողների ուսումնառության արդյունքները գնահատվում են ձևավորող գնահատման մեթոդներով:
22. Խմբակի ղեկավարը Խմբակի ծրագրի ավարտին իրականացված աշխատանքի վերաբերյալ Հաստատության տնօրենին է ներկայացնում գրավոր հաշվետվություն, որը կցվում է Խմբակի մատյանին: Հաշվետվության մեջ ներկայացվում է մասնակիցների ձեռք բերած կարողությունները, այն վերջնարդյունքները, որոնց ձևավորմանը նպաստել է Խմբակը, առաջարկություններ ծրագրի բարելավման մասին:

4. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

23. Հաստատությունում ուսումնական նախագծերը (այսուհետ՝ Նախագիծ) իրականացվում են 7-12-րդ դասարաններում:
24. Նախագիծը առանձին սովորողների կամ սովորողների փոքր խմբի կողմից որևէ ուսումնական առարկայի կամ ուսումնասիրվող որևէ օբյեկտի կամ երևույթի վերաբերյալ իրականացվող առարկայական կամ միջառարկայական հետազոտական աշխատանք է՝

նվիրված օրինաչափությունների, առանձնահատկությունների հետազոտմանը, արդյունքների ստացման և եզրակացությունների արձանագրմանը:

25. Սովորողի կողմից Նախագիծը կարող է իրականացվել ինչպես մեկ ուսումնական առարկայի շրջանակում, այնպես էլ տարբեր ուսումնական առարկաներից՝ հետազոտության մեթոդների համադրմամբ միևնույն օբյեկտի և երևույթի, օրինաչափությունների կամ առանձնահատկությունների վերաբերյալ տվյալների հավաքման, համադրման, վերլուծության շրջանակում:
26. Հաստատությունում Նախագիծն իրականացվում է ուսուցչի կողմից մշակված և համապատասխան առարկայական մեթոդմիավորման կողմից հավանության արժանացած Նախագծի պլանի հիման վրա, որը հաստատում է տնօրենը: Նախագծի թեման կարող է լինել առարկայի(ների) շրջանակում հետազոտություն, մշակութային, ազգագրական միջոցառում, համայնքի խնդիրներին նվիրված աշխատանք:
27. Հաստատությունը ուսումնական պլանի դպրոցական (ընտրովի) բաղադրիչից Նախագծի իրականացման համար սահմանված կարգով տրամադրում է համապատասխան ժամաքանակ:
28. Նախագծի իրականացման համար տրամադրված ժամաքանակը Հաստատության կողմից տարիֆիկացվում է: Միջառարկայական նախագծի դեպքում տարիֆիկացվում են մասնակցող բոլոր առարկաների ուսուցիչներին տրվող ժամաքանակները՝ մասնակցության տևողությանը համապատասխան:
29. Նախագծի ղեկավարը կազմում է Նախագծի մատյան, որը հաստատվում է Հաստատության տնօրենի հրամանով: Մատյանը կազմված է սովորողների հաճախումները և օրվա իրականացվող աշխատանքը՝ ըստ Նախագծի թեմատիկ պլանի գրանցման էջերից:
30. Սովորողները իրենք են ընտրում այն Նախագիծը, որին ցանկանում են մասնակցել: Սովորողները կարող են հրաժարվել մասնակցել Նախագծի աշխատանքներին առանց պատճառ ներկայացնելու:
31. Հաստատությունում սովորողների կողմից իրականացվող Նախագծերի իրականացման ընթացքը վերահսկվում է Հաստատության ուսումնական աշխատանքի գծով տեղակալի կողմից:

32. Նախագիծն ավարտելուց հետո սովորողը այն պաշտպանում է Նախագծի ուսուցչի մոտ, իսկ միջառարկայական Նախագծերի դեպքում՝ համապատասխան առարկաների ուսուցիչների հանձնաժողովի մոտ:
33. Հաստատության սովորողների կողմից իրականացված ավարտուն Նախագծերը գնահատվում են և հրապարակվում Հաստատության կայքում:
34. Նախագծի ղեկավարը Նախագծի ավարտից հետո, իրականացված աշխատանքի վերաբերյալ Հաստատության տնօրենին է ներկայացնում գրավոր հաշվետվություն: Հաշվետվության մեջ ներկայացվում է մասնակիցների ձեռք բերած կարողությունները, այն վերջնարդյունքները, որոնց ձևավորմանը նպաստել է Նախագիծը, առաջարկություններ ծրագրի բարելավման մասին:

Ձև-1

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

[Այստեղ նշել խմբակի անվանումը]

ՏԱՐՐԱԿԱՆ

[Այստեղ նշել կրթական այն աստիճանը, որում գործելու է խմբակը]

ԺԱՄԱՔԱՆԱԿ

[Այստեղ նշել խմբակին հատկացված ժամաքանակը տվյալ կրթական աստիճանում]

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

[Այստեղ նշել խմբակի անվանումը] համարվում է արտադասարանական գործունեության կարևոր տեսակներից մեկը: [Այստեղ նշել խմբակի անվանումը] պարապմունքները նպաստում են սովորողների [Այստեղ նշել խմբակի բովանդակությանը համապատասխանող կարողությունը(ները)] զարգացմանը և առարկայի դասավանդման ընթացքում ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը: [Այստեղ նշել խմբակի անվանումը] [Այստեղ գրել հանրակրթության պետական չափորոշչով տվյալ կրթական աստիճանի համար սահմանված վերջնարդյունքներից բխող կարողությունները, որոնք զարգանալու են խմբակի գործունեության արդյունքում]:

Նպատակները

- Ներկայացնել …….
- Ձևավորել և զարգացնել ……
- Նպաստել ……
- Արժևորել …….

Խնդիրները

- Ստեղծել …….. միջավայր:
- Աշխատանքներ տանել ……
- Ուշադիր լինել ……

- Հաճախակի կազմակերպել .....

Վերջնարդյունքները

Խմբակի անդամները կկարողանան՝

ա/ .....

բ/ .....

.....

Ծրագիր/ Թեմատիկ պլանավորում
տարեկան/ամսական/կիսամյակային

Հ.	Բովանդակություն	նպատակ	ժամաքանակ	Նշումներ
1.				
2.				
3.				